ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

24 փետրվարի 2020թ. **N 15-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԻՄՆԱԴՐԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով և 28-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել, որ հանրաքվեի քարոզչության կողմերը զանգվածային լրատվության միջոցներով հանրաքվեի քարոզչություն իրականացնելու, ժողովներ, հանդիպումներ և հանրաքվեի հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման, հանրաքվեի քարոզչության իրականացման նպատակով կազմավորված գրասենյակների կամ շտաբների (այսուհետ՝ շտաբներ) տարածքների վարձակալման, քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, քաղաքացիներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար օգտագործում են միայն քարոզչության ֆինանսավորման հիմնադրամի միջոցները:

2. Քարոզչության կողմերը «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն են ներկայացնում հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման հայտարարագրերը (այսուհետ՝ հայտարարագիր):

Հայտարարագրում նշվում են՝

1) քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված մուծումների ժամանակագրությունը, մուծված գումարի չափը.

2) սույն որոշման 1-ին կետով սահմանված յուրաքանչյուր ծառայության ձեռքբերման, գույքի կամ ապրանքի ձեռքբերման (վարձակալման) համար կատարված ծախսերը, դրանց կատարման ժամկետը, ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերի տվյալները.

3) հիմնադրամում մնացած գումարի չափը:

3. Սահմանել, որ հանրաքվեի քարոզչության կողմերի կազմավորած շտաբները չեն կարող տեղակայվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում (բացառությամբ այն դեպքերի, երբ շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին չպատկանող տարածք), հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերում, ինչպես նաև այն շենքերում, որտեղ գործում են ընտրական հանձնաժողովները:

4. Քարոզչության կողմերի հայտարարագրերը, հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ մյուս փաստաթղթերը հանրաքվեի փաստաթղթերի հետ «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետներում պահպանության են հանձնվում Հայաստանի պետական արխիվ:

5. Սահմանել հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրի ձևը՝ համաձայն հավելվածի:

6. Սահմանել, որ հայտարարագիրը կողմերը ներկայացնում են թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչով՝ Adobe Acrobat (*.pdf) (Ադոբ Աքրոբատ (*.պդֆ)) տարբերակով՝ մեկ ֆայլի մեջ: Հայտարարագրի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից և լրացվում այդ տարբերակում նշված եղանակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական
հանձնաժողովի 2020թ. փետրվարի 24-ի N 15-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման

_____

քարոզչության կողմի անվանում

_____--_____

հաշվետու ժամանակահատված

Մուտքեր			Ծախսեր					
Հիմնադրամի մուծումների ժամանակագրություն	Հիմնադրամ մուծված գումարի չափ (ՀՀ դրամ)		ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի ժամանակագրություն	ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված ձեռք բերված ապրանքների և ծառայությունների անվանում	Ծախսերի չափը (ՀՀ դրամ)		ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար կատարված ծախ-սերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալներ	ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հետ կապված, դեռ չվճարված դրա-մական պարտա-վորությունների չափը
					Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը	ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը		
1	2		3	4	5	6	7	8
Ընդամենը			Ընդամենը					

Հիմնադրամում մնացած գումարի չափ	

Հայտարարագիրը բաղկացած է _____ թերթից, կից պայմանագրերը, փաստաթղթերը՝ _____ թերթից:

_____

հանրաքվեի քարոզչության կողմի լիազոր ներկայացուցչի անուն, հայրանուն, ազգանուն, ստորագրություն, օր, ամիս,տարեթիվ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման հայտարարագիրը կազմելու և ներկայացնելու կարգի ու ժամկետների

1. *Հայտարարագիրը ներկայացնելու համար.*

1.1 Քարոզչության կողմերն իրենց հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը ներկայացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն քվեարկության օրվանից համապատասխանաբար 20 օր և 10 օր առաջ, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո՝ երրորդ օրը: Հայտարարագիրը ներկայացվում է թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչով՝ Adobe Acrobat (*.pdf) տարբերակով՝ մեկ ֆայլի մեջ: Հայտարարագրի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից և լրացվում այդ տարբերակում նշված եղանակով:

1.2 Հայտարարագիրը ներկայացվում է զանգվածային լրատվության միջոցներով քարոզչություն իրականացնելու, ժողովներ, հանդիպումներ և հանրաքվեի հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման, շտաբների վարձակալման, քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, քաղաքացիներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման համար կատարված ծախսերի վերաբերյալ:

2. Հայտարարագիրը կազմելու համար.

2.1 «քարոզչության կողմի անվանում» տողում լրացվում է հայտարարագիրը ներկայացնող կողմի անվանումը:

2.2 «հաշվետու ժամանակահատված» տողում լրացվում է այն ժամանակահատվածը, որի համար ներկայացվում է հայտարարագիրը:

2.2.1. Առաջին հայտարարագրի դեպքում որպես հաշվետու ժամանակահատվածի սկիզբ լրացվում է հանրաքվե նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ յոթերորդ օրվա օրը, ամիսը, տարեթիվը: Առաջին և երկրորդ հայտարարագրերի դեպքում որպես հաշվետու ժամանակահատվածի վերջ լրացվում է հանրաքվեի քվեարկության օրվան նախորդող համապատասխանաբար 20-րդ և 10-րդ օրերի՝ օրը, ամիսը, տարեթիվը, իսկ վերջին հայտարարագրի դեպքում՝ քվեարկության օրը, ամիսը, տարեթիվը: Յուրաքանչյուր հաջորդ հայտարարագիր իր մեջ ներառում է նախորդ հայտարարագրերի տվյալները:

2.3 ***«Մուտքեր» մասի.***

1) «Հիմնադրամի մուծումների ժամանակագրություն 1» սյունակի յուրաքանչյուր տողում ըստ հերթականության լրացվում է օրը, ամիսը, տարեթիվը այն օրերի, երբ կատարվել են մուծումները,

2) «Հիմնադրամ մուծված գումարի չափ 2» սյունակում լրացվում է յուրաքանչյուր օրվա մուծումների ընդհանուր չափը՝ ՀՀ դրամով,

3) «Ընդամենը» տողում լրացվում է «Հիմնադրամ մուծված գումարի չափ 2» սյունակում նշված գումարների ընդհանուր չափը:

2.4 ***«Ծախսեր» մասի***.

1) «ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի ժամանակագրություն 3» սյունակի յուրաքանչյուր տողում ըստ հերթականության լրացվում է օրը, ամիսը, տարեթիվը այն օրերի, երբ կատարվել են ծախսերը, իսկ մինչև հիմնադրամի ձևավորումը ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դեպքում, լրացվում է «մինչև հիմնադրամի ձևավորում» բառերը կամ դրանց հապավումը՝ «ՄՀՁ»,

2) «ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված ձեռք բերված ապրանքների և ծառայությունների անվանում 4» սյունակում ըստ օրերի առանձին տողերում լրացվում է զանգվածային լրատվության միջոցներով քարոզչության իրականացման, ժողովներ, հանդիպումներ և հանրաքվեի հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման, շտաբների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, քաղաքացիներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման նպատակով ձեռք բերված յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի անվանումը,

3) «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակում լրացվում է 4-րդ սյունակում նշված յուրաքանչյուր ծառայության ձեռքբերման, գույքի կամ ապրանքի ձեռքբերման (վարձակալման) համար կատարած ծախսի փաստացի չափը: Այն դեպքերում երբ 4-րդ սյունակում նշված ապրանքը, գույքը կամ ծառայությունը ձեռք է բերվել (վարձակալվել է) մինչև հիմնադրամի ձևավորումը, ինչպես նաև անվճար ստացման դեպքում, ծախսի փաստացի չափը նշվում է «0 (զրո)»,

4) «ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը 6» սյունակում նշվում է հայտարարագրման ենթակա ապրանքների կամ ծառայությունների շուկայական արժեքը: Եթե «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակում նշված գումարը համընկնում է հայտարարագրման ենթակա ձեռք բերված գույքի, ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքի հետ, ապա 6-րդ սյունակում նշվում է նույն թիվը: Մինչև հիմնադրամի ձևավորումը ստացված գույքի, ապրանքների և ծառայությունների դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ ստացված հայտարարագրման ենթակա գույքի, ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքը 5-րդ սյունակում նշված թվից ավելի բարձր է, նշվում է հայտարարագրման ենթակա գույքի, ապրանքի կամ ծառայության շուկայական արժեքը,

5) «ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված գույքի, ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար կատարված ծախսերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալներ 7» սյունակում լրացվում է 4-րդ սյունակում նշված հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման (վարձակալման) ծախսերի կատարումը հավաստող փաստաթղթերի տվյալները (պայմանագրի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, վճարման անդորրագրի համարը, օրը, ամիսը, տարեթիվը և այլն),

6) «ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված գույքի, ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (վարձակալման) հետ կապված վճարման ենթակա, դեռ չվճարված դրամական պարտավորությունների չափը 8» սյունակում լրացվում է 4-րդ սյունակում նշված հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման (վարձակալման) մասով դեռ չվճարված դրամական պարտավորությունների չափը՝ եթե այդպիսիք առկա են: Եթե հայտարարագրման ենթակա յուրաքանչյուր ծառայության, գույքի կամ ապրանքի ձեռքբերման (վարձակալման) մասով վճարման ենթակա, դեռ չվճարված դրամական պարտավորություններ առկա չեն, ապա նշվում է «0 (զրո)»,

7) «Ընդամենը» տողում լրացվում է «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» սյունակում նշված թվերերի ընդհանուր չափը և «ԿԸՀ 24.02.2020թ. N 15-Ա որոշման 1-ին կետով նկարագրված ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը չափ 6» սյունակում նշված թվերերի ընդհանուր չափը:

3. «Հիմնադրամում մնացած գումարի չափ» տողում լրացվում է հաշվետու ժամանակահատվածի վերջում հիմնադրամում մնացած չօգտագործված գումարի չափը, որը հավասար է «Հիմնադրամ մուծված գումարի չափ 2» սյունակի ընդհամենը տողի և «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 5» տողի թվերի տարբերությանը:

4. Հայտարարագրի համապատասխան տողում լրացվում է հայտարարագրի թերթերի և դրան կից պայմանագրերի, փաստաթղթերի թերթերի թվերը:

Հայտարարագիրը ստորագրում է քարոզչության կողմի լիազոր ներկայացուցիչը, նշվում է լիազոր ներկայացուցչի անունը, հայրանունը, ազգանունը և լրացվում է հայտարարագիրը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը: